30 մարտի 2015 թ. N 178-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՏՈՂԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տողի ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման 2015 թվականի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը.

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմը.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի վարչակազմը եռամսյակային հաշվետվություն է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն՝ սույն Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2015 թվականի մարտի 30-ի
N 178-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆԻ ՏՈՂԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ

**ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2015 ԹՎԱԿԱՆ**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի Տողի ենթաշրջանի (այսուհետ՝ ենթաշրջան) համայնքների համաչափ զարգացումը մեծապես պայմանավորված է այդ համայնքների գյուղատնտեսության զարգացմամբ, քանի որ ներկայումս և տեսանելի հեռանկարում այս ենթաշրջանի բնակչության մեծ մասի կենսամակարդակի բարձրացման աղբյուր են լինելու այն եկամուտները, որոնք ստացվում են գյուղատնտեսական արտադրությունից և գյուղատնտեսության բնագավառում վարձու աշխատանքից՝ հաշվի առնելով ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, տեխնիկական ռեսուրսների առկայությունը:

Ենթաշրջանը գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի հյուսիս-արևելյան մասում: Այն ընդգրկում է Տող, Տումի, Ազոխ, Դրախտիկ, Թաղուտ, Հակակու, Մեծ Թաղեր, Մոխրենես համայնքները, որոնց հեռավորությունը մայրաքաղաք Ստեփանակերտից տատանվում է 48-75 կիլոմետրի սահմաններում, իսկ շրջկենտրոն Հադրութից՝ 15-35 կիլոմետրի սահմաններում: Ենթաշրջանի համայնքներն ունեն 8481,01 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողեր, որոնք կազմում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութի շրջանի ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի 7,9 տոկոսը:

Ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ նախորդ տարիներին կատարվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես՝ որոշակիորեն բարելավվել է ենթաշրջանի ոռոգման համակարգը, բարեկարգվել են դաշտամիջյան ճանապարհները, կատարվել է բազմամյա կերային մշակաբույսերի ցանքս, ձեռք են բերվել և համայնքներին տրամադրվել պտղատու ծառատեսակների տնկիներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ և մեկ միավոր գյուղատնտեսական տեխնիկա, վերանորոգվել են անասնապահական ֆերմաներ:

Ենթաշրջանի գյուղատնտեսության արդյունավետ զարգացումը պահանջում է նպատակաուղղված հետևողական աշխատանքների իրականացում, ինչով էլ պայմանավորված է սույն Ծրագրի մշակումը:

## I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

***Նպատակը.***

Ենթաշրջանում առկա հողային, աշխատանքային, նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և համալրման արդյունքում նախադրյալներ ստեղծել բնակչության կենսապայմանների աստիճանական բարելավման, բնակչության արտահոսքի մեղմացման և կանխման, արժանավայել ու անվտանգ ապրելու և բարիքներ ստեղծելու համար:

***Խնդիրները.***

1) ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսության զարգացման, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական գործունեության ծավալման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում.

2) առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծում, վարելահողերի ու բազմամյա տնկարկների՝ ոռոգման ջրով ապահովվածության մակարդակի բարձրացում.

3) անասնաբուծության նախընտրելի ճյուղերի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծում.

4) ենթաշրջանի համայնքների բնակչության աշխատունակ հատվածի համար լիարժեք զբաղվածության ապահովում:

## II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ենթաշրջանի համայնքներում կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ենթաշրջանի գյուղատնտեսության զարգացման նպատակով 2015 թվականին անհրաժեշտ է իրականացնել ստորև ներկայացվող միջոցառումները՝

***1) Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն (կորնգան)***. բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնումը կարևորվում է ինչպես անասունների համար կերային բազայի ապահովման, այնպես էլ ցանքատարածությունների կառուցվածքի բարելավման տեսանկյունից: Ծրագրով նախատեսվում է բազմամյա խոտաբույսերի 36 հեկտար տարածքի մշակության համար հատկացնել 864 000 ՀՀ դրամ: Նշված ֆինանսական միջոցները կտրամադրվեն բազմամյա խոտաբույսերի տակ նախատեսված տարածքների մշակության համար՝ (դիզվառելիքի ձեռքբերում), իսկ միջոցառման իրականացման համար համապատասխան քանակությամբ սերմացուն հողօգտագործողներին կտրամադրվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագրի շրջանակներում.

***2) Պտղատու այգիների հիմնադրում (տնկիների տրամադրում).*** նշված միջոցառման իրականացման նպատակով նախատեսվում է ներդնել 4 015 000 ՀՀ դրամ: Պտղատու, հատկապես թզուկ պտղատու ծառատեսակների մշակությունը հնարավորություն կտա լուծել թարմ պտուղներով բնակչության ապահովվածության հարցը, ինչպես նաև նախադրյալներ կստեղծվեն վերամշակման համար.

***3) Ոռոգման համակարգի բարելավում.*** ծրագրով նախատեսվում է 2015 թվականին 16 254 000 ՀՀ դրամ ուղղել ենթաշրջանի համայնքներում ոռոգման ցանցի բարելավմանը, որը հնարավորություն կստեղծի լիարժեք օգտագործել առկա գյուղատնտեսական նշանակության հողերը, բարձրացնել վարելահողերի ու բազմամյա տնկարկների ջրաապահովվածության մակարդակը: Միջոցառումը կարևոր նախադրյալ է բանջարա-բոստանային և կերային կուլտուրաների մշակության համար:

***4) Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում.*** գյուղատնտեսության ինտենսիվացման, նրա արդյունավետության բարձրացման կարևոր նախապայմաններից է գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակազմի արդիականացումը, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացումը: Ծրագրով նախատեսվում է թվով մեկ թրթուրավոր տրակտոր, մեկ խոտհնձիչ, մեկ

սերմազտիչ և մեկ ծղոտամամլիչ ձեռքբերման համար հատկացնել 6 500 000 ՀՀ դրամ, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով պայմանագրային հիմունքներով կտրամադրվի հողօգտագործողին.

***5) Խոշոր, մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ձեռքբերում.*** անասնագլխաքանակի և մեղվաընտանիքների ավելացումը ենթադրում է ոչ միայն թարմ և վերամշակված անասնապահական մթերքների և մեղրի նկատմամբ կարիքների բավարարում, այլև կայուն զբաղվածության ապահովում և եկամուտների ավելացում: Ծրագրով նախատեսվում է 33 000 000 ՀՀ դրամ հատկացնել խոշոր, մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ձեռքբերման նպատակով:

Նշված միջոցառումներից խոշոր, մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ձեռքբերման համար նախատեսված գումարը կտրամադրվի վարկի տեսքով, իսկ պտղատու այգիների հիմնադրման, բազմամյա խոտաբույսերի մշակության, ոռոգման համակարգի բարելավման համար նախատեսված գումարները՝ անհատույց:

Կերային բազմամյա խոտաբույսերի մշակության, պտղատու այգիների հիմնադրման, ոռոգման համակարգի բարելավման (պոլիէթիլենային խողովակների ձեռքբերում) միջոցառումների համար ֆինանսական միջոցները կամ անհրաժեշտ ապրանքանյութերը կտրամադրվեն շրջանի վարչակազմին՝ ներկայացված համապատասխան հայտի հիման վրա, իսկ խոշոր, մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ու գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման միջոցառումների համար ֆինանսական միջոցները կտրամադրվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի միջոցով՝ շրջանի վարչակազմի կողմից ներկայացված համապատասխան հայտի հիման վրա:

Ծրագրի իրագործման համար 2015 թվականին պահանջվող ներդրումներն ըստ եռամսյակների և ծրագրի իրագործման համար 2015 թվականին պահանջվող ներդրումներն ըստ համայնքների ներկայացված են NN 1 և 2 աղյուսակներում:

**Աղյուսակ N 1**

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ

**(ՀՀ դրամ)**

| *Հ/Հ* | *Ներդրումների նպատակը* | *2015 թվական* | *այդ թվում՝ ըստ եռամսյակների* | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | *1-ին* | *2-րդ* | *3-րդ* | *4-րդ* |
| 1. | Կերային բազմամյա խոտաբույսերի մշակություն | 864 000 | | 400 000 | 464 000 | |
| 2. | Պտղատու այգիների հիմնադրում | 4 015 000 | 2 530 000 | | | 1 485 000 |
| 3. | Ոռոգման համակարգի բարելավում | 16 254 000 | 10 654 000 | 5 600 000 | | |
| 4. | Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում | 6 500 000 | | 3 000 000 | | 3 500 000 |
| 5. | Խոշոր, մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ձեռքբերում | 33 000 000 | | 10 000 000 | 10 000 000 | 13 000 000 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ* | | ***60 633 000*** | ***13 184 000*** | ***19 000 000*** | ***10 464 000*** | ***17 985 000*** |

**Աղյուսակ N 2**

## ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Համայնքի անվանումը | Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն | | Պտղատու այգիների հիմնադրում | | Ոռոգման համակարգի բարելավում | Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում | | Խոշոր և մանր եղջերավոր անասունների և մեղվափեթակների ձեռքբերում | | Ընդամենը համայնքում |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Նախատեսվում է ցանքս (հեկտար) | Տրամադրվող ոռոգման վարձ գումար | Տնկի (հատ) | Ընդամենը գումար | | Միավոր (հատ) | Ընդամենը գումար | Գլուխ (հատ) | Ընդամենը գումար | |
| 1 | Ազոխ | | | 1 000 | 1 000 000 | | | | | | 1 000 000 |
| 2 | Դրախտիկ | | | | | | | | 15 | 3 000 000 | 3 000 000 |
| 3 | Թաղուտ | 6 | 144 000 | 620 | 880 000 | 11 154 000 | | | 20 | 4 000 000 | 16 178 000 |
| 4 | Հակակու | | | 200 | 300 000 | 5 100 000 | 1 | 2 000 000 | 30 | 6 000 000 | 13 400 000 |
| 5 | Մեծ Թաղեր | | | | | | | | 35 | 7 000 000 | 7 000 000 |
| 6 | Մոխրենես | 5 | 120 000 | 1 200 | 1 300 000 | | | | 10 | 2 000 000 | 3 420 000 |
| 7 | Տող | | | | | | 2 | 2 500 000 | 25 | 6 000 000 | 8 500 000 |
| 8 | Տումի | 25 | 600 000 | 500 | 535 000 | | 1 | 2 000 000 | 25 | 5 000 000 | 8 135 000 |
| **Ընդամենը** | | **36** | **864 000** | **3 520** | **4 015 000** | **16 254 000** | **4** | **6 500 000** | **160** | **33 000 000** | **60 633 000** |

*Ծանոթություն. Տող համայնքում ԽԵԱ, ՄԵԱ ձեռքբերում և մեղվաբուծության վարկ միջոցառման համար նախատեսվող 6 000 000 ՀՀ դրամից 1 000 000 ՀՀ դրամը նախատեսվում է 20 մեղվափեթակ ձեռքբերելու համար:*

## III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում սույն ծրագրի իրականացումից ակնկալվում է ենթաշրջանի համայնքներում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) կերային մշակաբույսերի մշակությունը դրական ազդեցություն կունենա գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման վրա: Այն, որպես ցանքաշրջանառության կարևոր օղակ, կնպաստի դաշտերի մոլախոտերից մաքրմանը, հողի կառուցվածքի բարելավմանը և ազոտով հարստացմանը, կբարձրանա դրանից հետո մշակվող կուլտուրաների բերքատվությունը:

Իրականացվող ներդրումների հաշվին կկատարվի 36 հեկտար բազմամյա կերային խոտաբույսերի ցանքս՝ 2015 թվականի աշնանը և 2016 թվականի գարնանը, որից հետագա տարիներին կապահովվի միջինը 180-185 տոննա համախառն բերք՝ տարվա կտրվածքով. 1 տոննայի միջին արժեքը կազմում է 35 000 ՀՀ դրամ: Ստացված բերքը որպես կեր օգտագործումից կստացվի միջին հաշվով 7,4 տոննա միս՝ կենդանի քաշով, որի ընդհանուր արժեքը կկազմի 8 000 000 ՀՀ դրամ.

2) պտղատու նոր այգիների հիմնադրումը նախադրյալներ կստեղծի ենթաշրջանում պտղաբուծության ճյուղի զարգացման համար: Հնարավորություն կստեղծվի տեղական մրցունակ արտադրանքի հաշվին փոխարինել ներմուծվող պտղատեսակների զգալի մասը, ինչպես նաև կնպաստի պտղի նկատմամբ ինքնաբավության մակարդակի բարձրացմանը: Արտադրության ծավալների ավելացումը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը:

Իրականացվող ներդրումների հաշվին ձեռք կբերվեն և հողօգտագործողներին կտրամադրվեն տարբեր պտղատեսակի տնկիներ, որը պտղաբերության կանցնի 3-4-րդ տարում: Հիմնադրված այգիներից ակնկալվող համախառն բերքը կազմում է 150-225 տոննա, իսկ լրիվ պտղաբերության հասնելուց հետո՝ 300-375 տոննա. 1 տոննայի միջին արժեքը կազմում է 200 000 – 300 000 ՀՀ դրամ.

3) ոռոգման համակարգի բարելավման շնորհիվ ենթաշրջանում կավելանան ոռոգվող հողատարածքները, ինչը զգալիորեն կբարձրացնի վարելահողերի օգտագործման ադյունավետությունը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության ծավալները:

Իրականացվող ներդրումների հաշվին 500 000 ՀՀ դրամի չափով ձեռք կբերվեն և հողօգտագործողներին կտրամադրվեն տարբեր տրամագծի պոլիէթիլենային խողովակներ, իսկ 15 754 000 ՀՀ դրամի չափով կկառուցվեն և կվերանորոգվեն ոռոգման ցանցեր.

4) ենթաշրջանում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերումը կնպաստի ժամանակին և ագրոկանոններին համապատասխան մշակությանը, ինչպես նաև կհամալրի առկա գյուղատնտեսական տեխնիկայի պարկը.

5) անասնագլխաքանակի ավելացման նպատակով ձեռք կբերվի 160 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որոնց բուծման արդյունքում տվյալ տարում և հետագա

տարիներին կարտադրվի 128 000 կիլոգրամ կաթ և 19 200 կիլոգրամ միս կենդանի քաշով, դրանց ընդհանուր գումարը գործող գներով կազմում է 37 120 000 ՀՀ դրամ: 20 մեղվաընտանիքից կստացվի միջին հաշվով 260 կիլոգրամ մեղր, որը միջին գներով կկազմի 1 040 000 ՀՀ դրամ:

6) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը և կավելանան եկամուտները:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**